«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ

ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՈՒսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

ՀԵՂԻՆԱԿ Լիանա Խաչատրյան Վարազդատի

ՄԱՐԶ Շիրակի մարզ, գյուղ Զիթհանքով

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ «Զիթհանքովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն ---------- 3 - 4
2. ՈՒսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում
– Ընտանեկան միջավայրը և երեխայի դաստիարակությունը ---------- 5 - 7
– Ընտանեկան դաստիարակություն---------- 8 -9
– Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը կրտսեր դպրոցականի քաղաքացիական որակների դաստիարակության գործում----------10- 18
– Տարրական դպրոցի և ընտանիքի փոխգործունեության ձևերն ու մեթոդները---------- 19 - 20
3. Հետազոտական մաս----------21 - 22
4. Եզրակացություն----------23
5. Գրականություն----------24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անհերքելի է, որ երեխաների դաստիարակության գործում կարևոր դեր է խաղում ընտանիքը: Այստեղ ծնողները աշխատում են զարգացնել երեխաների ընդունակությունները, հետևել նրանց առողջությանը և ձևավորել նրանց բարոյական հատկությունները:

Ընտանեկան միջավայրի ազդեցությունը երեխայի վրա դրսևորվում է ընտանիքի կյանքի ընդհանուր բնույթով, նրա անդամների օրինակի և խոսքի միջոցներով: Ընտանիքը, որպես հասարակական մի բջիջ առհասարակ կապված է հասարակական կյանքի հետ և շրջապատի բոլոր կարևոր իրադարձությունները իրենց արձագանքն են գտնում այնտեղ: Ծնողների լավատեսությունը, հայրենասիրությունը, նրանց կենսուրախությունը և հասարակական ակտիվությունը ընտանեկան միջավայրը դարձնում են կենսուրախ և հասարակայնորեն առողջ:

Ընտանեկան միջավայրի ազդեցության միջոցներից է նաև ընտանիքի անդամների անձնական օրինակը: Վաղուց հայտնի է, որ երեխայի բնությանը հատուկ է ընդօրինակելը: Երեխան մշտապես դիտում է իրեն շրջապատող մարդկանց, նրանց գործերը, տեսնում է նրանց վերաբերմունքը մյուս մարդկանց ու երևույթների նկատմամբ և աննկատելիորեն ընդօրինակում: Սակայն երեխան ընդօրինակում է ոչ միայն դրականը, այլև բացասականը: Երբեմն ծնողները տեսնելով երեխայի այս կամ այն բացասական հատկությունները, մնում են զարմացած, այնինչ դրանց արմատները շատ հաճախ գտնվում են ընտանիքում, ծնողների արարքներում: Ծնողներն ու ընտանիքի անդամները երեխայի առաջին և ամենակարևոր ուսուցիչներն են: Ոչ մի հակասություն չի կարող լինել դպրոցի և ընտանիքի

միջև, եթե ծնողներն ու դպրոցը հաջողությամբ համագործակցում են, ինչը աշակերտի կրթության վճռորոշ տարրն է:

Թեմայի արդիականությունը: ՈՒսուցչի ծնողների հետ համագործակցությունը առանձնահատուկ նշանակություն ունի աշակերտների հաջողության համար: Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին, աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում:

Թեմայի նպատակը: Քանի որ ծնողների ներգրավվածությունը դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը հարստացնում է դպրոցի կուլտուրան և նպաստում է նրա զարգացմանը: ՈՒստի մեր հետազոտության նպատակն է ուսումնասիրել փոխադարձ համագործակցությունն:

Նպատակից ելնելով սահմանենք հետազոտության հետևյալ **խնդիրները**.

1. ուսումնասիրել և վերլուծել թեմային առնչվող մասնագիտական գիտամեթոդական գրականություն
2. ուսումնասիրել ուսումնասիրել ուսուցչի և ծնողների համագործակցությունն
3. բացահայտել փոխադարձ համագործակցության առանձնահատկությունները,
4. մշակել փոխադարձ համագործակցության կազմակերպման արդյունավետությունը:

Առաջադրված խնդիրների լուծման նպատակով կիրառվել են հետազոտության հետևյալ **մեթոդները**. դիտում, զրույց, հարցում, անկետավորում, փորձարարական ուսուցում:

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԿԱԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ ԵՐԵԽԱՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ընտանեկան միջավայր ասելով մենք նկատի ունենք ընտանիքի անդամների փոխհարաբերությունները և սովորությունները, նրանց աշխատանքը և վերաբերմունքը հասարակական կյանքի երևույթների նկատմամբ: Դա երեխայի համար ամենահարազատ միջավայրն է, այստեղ են սկսում զարգանալ նրա ֆիզիկական և հոգեկան ուժերը, այստեղ է նա ստանում առաջին տպավորություններն ու մտապատկերները կյանքի վերաբերյալ: Մինչև մանկապարտեզ կամ դպրոց հաճախելը փոքրերի համար ընտանիքը հանդիսանում է գրեթե միակ հասարակական միջավայրը, ու խարսխվում են նրանց առողջության և բնավորության հիմքերը, ուր զարգանում են նրանց հարցասիրությունը, ուր ձևավորվում են նրանց վարքի որոշ հմտությունները:[1]

Անհերքելի է, որ երեխաների դաստիարակության գործում կարևոր դեր է խաղում ընտանիքը: Այստեղ ծնողները աշխատում են զարգացնել երեխաների ընդունակությունները, հետևել նրանց առողջությանը և ձևավորել նրանց բարոյական հատկությունները:

Ընտանեկան միջավայրի ազդեցությունը երեխայի վրա դրսևորվում է ընտանիքի կյանքի ընդհանուր բնույթով, նրա անդամների օրինակի և խոսքի միջոցներով: Ընտանիքը, որպես հասարակական մի բջիջ առհասարակ կապված է հասարակական կյանքի հետ և շրջապատի բոլոր կարևոր իրադարձությունները իրենց արձագանքն են գտնում այնտեղ: Ծնողների լավատեսությունը,

---

[1] Յու. Ա. Ամիրջանյան , Ա. Ս. Սահակյան , Մանկավարժություն, Երևան , 2005թ., էջ 116

հայրենասիրությունը, նրանց կենսուրախությունը և հասարակական ակտիվությունը ընտանեկան միջավայրը դարձնում են կենսուրախ և հասարակայնորեն առողջ: Լուրջ նշանակություն ունի նաև ընտանիքի կյանքի կազմակերպվածությունը, որոշակի կարգ ու կանոնը, սովորույթները, ավանդույթները, բնակարանի տեսքը նույնպես որոշում է ընտանիքի կյանքի ընդհանուր բնույթը: Եթե ընտանիքում գոյություն ունի որոշ կարգ ու կանոն, քնից արթնանալու, նախաճաշի, ճաշի, ընթրիքի ժամանակ և այդ դարձել է կենցաղ, եթե ստեղծված են որոշ կայուն ավանդույթներ կապված ծննդյան տարեդարձի, տոն և կիրակի օրերին զբոսանքի գնալը, եթե բնակարանը ձևավորված է պարզ, ճաշակով, պահվում է միշտ հավաքված և մաքուր՝ նշանակում է ընտանիքի կյանքը կազմակերպված է: Այս ամենը երեխայի մեջ առաջ են բերում կարգապահություն, ճշտապահություն ընտանիքի նկատմամբ պատվի և սիրո զգացմունք և հակառակը:

Ընտանեկան միջավայրի ազդեցության միջոցներից է նաև ընտանիքի անդամների անձնական օրինակը: Վաղուց հայտնի է, որ երեխայի բնությանը հատուկ է ընդօրինակելը: Երեխան մշտապես դիտում է իրեն շրջապատող մարդկանց, նրանց գործերը, տեսնում է նրանց վերաբերմունքը մյուս մարդկանց ու երևույթների նկատմամբ և աննկատելիորեն ընդօրինակում: Սակայն երեխան ընդօրինակում է ոչ միայն դրականը, այլև բացասականը: Երբեմն ծնողները տեսնելով երեխայի այս կամ այն բացասական հատկությունները, մնում են զարմացած, այնինչ դրանց արմատները շատ հաճախ գտնվում են ընտանիքում, ծնողների արարքներում:

Հետևություն՝ ծնողների խնդիրն է՝ աշխատել, որպեսզի ընտանեկան միջավայրում տիրապետի դրական օրինակը, այդ դեպքում միայն հնարավոր է ապահովել ընտանեկան միջավայրի բարերար ազդեցությունը երեխայի զարգացման գործում:

Ընտանեկան միջավայրի ազդեցության միջոց է ընտանիքի անդամների խոսքը: Ընտանիքում թե կրտսեր, թե ավագ անդամները հաղորդում են իրենց տպավորությունները տեսածի և լսածի վերաբերյալ, պատմում իրենց աշխատանքային գործունեության և շրջապատի կյանքի կարևոր դեպքերի մասին: Խոսքի օգնությամբ քննարկվում են բազմազան հարցեր, ծնողները երեխաներին տալիս են խորհուրդ, բացատրություն:

Ծնողները պարտավոր են աշխատել, որպեսզի խոսքը ընտանիքում դրական ազդեցություն ունենա: Չպետք է մոռանալ, որ երեխաները լսում են ընտանիքի անդամների խոսքը և համապատասխան ազդեցություն կրում: Ուստի պետք է լուրջ ուշադրություն դարձնել յուրաքանչյուր խոսքի վրա, ձգտել, որ այն համապատասխանի մեր դաստիարակության պահանջներին:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Դարեր շարունակ երեխաների դաստիարակությունն իրականացվել է ընտանիքում և ուսումնական հաստատություններում: Ընտանեկան դաստիարակության առնչությամբ հանդես եկան 3 հիմնական ուղղություններ.[2]

1. Պեստալոցին էր, որը տունը համարում էր բնական դաստիարակության հիմք, գտնում էր որ մարդկանց ընտանեկան հարաբերությունն առավել բնական հարաբերություններն են և դաստիարակությունը նույնպես, սակայն նա չէր ժխտում ուսումնական հաստատությունների դերը:
2. Անգլիացի սոցիալիստ Ռոբերտ Օունն էր, նա ընտանիքը համարում էր էգոիզմի և երեսպաշտության բույն, բացասական կարծիք ուներ ընտանեկան դաստիարակության մասին:
3. Գտնում էր, որ երեխաների դասիարակությունն իրականացվում է դպրոցի, ընտանիքի, հասարակության համատեղ ջանքերով: Ընտանիքի ազդեցությունը երեխաների զարգացման և ձևավորման վրա ունի անփոխարինելի ուժ, որովհետև յուրաքանչյուր խելամիտ ծնող լավ է ճանաչում իր երեխային: Երեխայի ընտանեկան դաստիարակության համար ամուր հիմքը ծնողների միմյանց սերն է:

Առաջին պայմանը ընտանեկան համախումբն ու ձևավորումն է պարտքի պատասխանատվության խոր զգացումն է, երեխաների իրար նկատմամբ սիրո, բոլոր հարազատների նկատմամբ հարգանքի բարձր զգացողության և բարձր զգացմունքի ձևավորումն է: Ընտանեկան դաստիարակության երկրորդ պայմանը չափավորությունն է: երեխային չի կարելի անընդհատ պատժել և երես տալ բոլոր պահանջները կատարել: Երրորդ կարևոր պայմանը ծնողների սկզբունքայնության կայունությունն է, այս դեպքում սկզբունքայնությունը վերաճում դառնում է վճռական:

---

[2] Յու. Ա. Ամիրջանյան , Ա. Ս. Սահակյան , Մանկավարժություն, Երևան , 2005թ., էջ 117

Չորրորդ կարևոր պայմանը երեխաների հայրենասիրական հումանիստական, կոլեկտիվիստական, աշխատանքային զգացմունքների ձևավորումն է և դաստիարակումը: Ընտանիքում կարևոր նշանակություն ունի երեխաների բարոյական այնպիսի որակների ձևավորում ինչպիսիք են մանկական հաղորդակցության դերը: Մեծ նշանակություն ունի ծնողների անձնական օրինակը, ինչպես նաև նրանց կողմից խելացի վերահսկողության դերը: Մեծ նշանակություն ունի աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական դաստիարակության դերը, որոնք պետք էր իրականացնել ըստ տարածքային փուլերի: Ընտանեկան դաստիարակության համակարգում կարևոր է դպրոցականների ուսման բարձր արդյունավետությունն ապահովելու համար ծնողները կատարում են մի շարք պայմաններ: Դպրոցը պետք է հաշվի առնի ընտանիքի կառուցվածքի առանձնահատկությունները: Մեզ մոտ ամենաշատ դերը տրվում է մորը, տատիկին, ժամանակակից ընտանիքի համար բնորոշ է ծնողների կրթական, հասարակական գործունեություն: Ծնողները սկսել են դպրոցից պահանջել ավելին: Ընտանեկան դաստիարակության սկզբնաղբյուրն է ինչ կատարվում է երեխայի դաստիարակության և նրա անձնավորության ձևավորման գործում: Ուրեմն դպրոցը ընտանիքի օգնականն է և պետք է օգնի ծնողին մասնագիտական կողմնորոշման գործում: Ըստ օրենսդրության կա հատուկ կետ, որտեղ նշվում է ծնողի և նրա պարտականությունների փոխարինողների իրավունքների, պարտականությունների բնագավառում:

ԴՊՐՈՑԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Տարրական դպրոցի ուսուցչի կարևոր խնդիրներից է աշխատանքն ընտանիքի հետ: Ընտանիքն ու դպրոցը միավորում են իրենց ջանքերը երեխաների լավ ապագայի համար մղվող պայքարում: Տարրական դպրոցի ուսուցիչը աշակերտների դաստիարակության գործում հենվում է ընտանիքի վրա, ուղղորդում է ընտանեկան դաստիարակությունը մարդասիրական ուղղվածությամբ: Նա լավ է հասկանում ժամանակակից ընտանիքի խնդիրները և անում է իրենից կախված ամեն ինչ, որպեսզի ընտանեկան և դպրոցական դաստիարակության պրոցեսներն ընթանան համընթաց:

Այն, որ երեխաներն իրենց ծնողների հայելային արտացոլաքն են, հաստատվում է մշտապես: Կ.Ն. Վոլկովը այս կախվածության ուսումնասիրության համար կազմակերպել էր բավականին տեսանելի էքսպերիմենտ: 6-7 տարեկան նախադպրոցականների խմբին իրենց մայրերի հետ հրավիրել էին հարցազրույցի: Սակայն նրանց կես ժամ տևողությամբ թողեցին էքսպերիմենտալ սենյակում, որտեղ էլ նրանք պետք է սպասեին հոգեբանի ընդունելությանը: Սենյակում առկա էին երեխաների համար շատ հետաքրքիր իրեր՝ նկարներ, գրքեր, խաղալիքներ: Էքսպերիմենտը կազմակերպողը գաղտնի հետևում էր, թե ինչպես կպահեն իրենց երեխաներն ու մայրերը:

Նրանք իրենց պահում էին շատ տարբեր: Ոմանք միասին դիտում էին գրքերը, քննարկում դրանք, նկարում կամ խաղում էին, այսինքն ակտիվորեն

փոխհամագործակցում էին այդ առարկաների հետ: Մյուսները միայն հետևում էին, ոչնչի ձեռք չտալով: Երրորդներն էլ կես ժամ նստած սպասում էին, առարկաների հանդեպ ոչ մի հետաքրքրություն չցուցաբերելով: Հաջորդող ստուգումը հաստատեց, որ երեխաների ճանաչողական ակտիվությունն ամբողջովին արտահայտում էր նրանց ծնողների վարքը:[3]

Եթե ընտանիքն այդքան ուժեղ է ազդում անհատի կայացման պրոցեսների և արդյունքների վրա, ապա հենց նրան է անհրաժեշտ տրամադրել առաջնային ուշադրությունը: Բազմաթիվ ժամանակակից ընտանիքներում ծնողների ուժերն ու ժամանակը ծախսվում են երեխաների նյութական ապահովման, սակայն ոչ հոգևոր ձևավորման և զարգացման վրա:

Երեխաների դաստիրակության համար դպրոցի, ընտանիքի և հանրության գործունեության կոորդինացումն իրականացվում է հետևյալ կազմակերպչական ձևերում՝

- դպրոցի մանկավարժական կոլեկտիվի, ծնողական կոմիտեի, հանրային խորհուրդների, գրադարանների, ոստիկանության և առողջապահական մարմինների դաստիարակչական աշխատանքի պլանների կոորդինացում՝ դաստիարակչական պրոցեսի յուրաքանչյուր անդամի գործառույթների հստակ բաշխմամբ:
- Դպրոցի ուժերով երեխաների հետ աշխատանքի առավել արդյունավետ եղանակների համակարգված ուսուցման կազմակերպում ծնողների և հանրության ներկայացուցիչների հետ;

---

[3] Հ. Մ. Մախչանյան , Ալ. Ս. Մանուկյան , Մանկավարժության ընդհանուր հիմունքներ , Երևան , 1997թ., Երևանի համալսարանի հրատարակչություն

- Դաստիարակչական աշխատանքի ընթացքի և արդյունքների մանրամասն ուսումնասիրություն և համատեղ քննարկում, հայտնաբերված թերությունների պարզաբանում, դրանց հաղթահարման համար համատեղ միջոցառումների իրականացում:

Ծնողների հետ հիմնական աշխատանքը դպրոցն իրականացնում է ծնողական միավորումների միջոցով՝ կոմիտեներ, խորհուրդներ, կոնգրեսներ, ասոցիացիաներ, ասամբլեաներ և այլն: Նրանցից յուրաքանչյուրն ունի իր կանոնադրությունը (դրույթը, պլանը), որով որոշվում են գործունեության գլխավոր ուղղությունները, դաստիարակչական պրոցեսի մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները: Բազմաթիվ դեպքերում կազմվում է ընտանիքի, դպրոցի և հանրության համատեղ գործունեության միասնական պլան: Իսկ այնտեղ, որտեղ անցել են դպրոցական և ընտանեկան դաստիարակության ավելի սերտ իրագործմանը, ստեղծվում են «դպրոց-ընտանիք» կոմպլեքսներ: Նման կոմպլեքսների կանոնադրության գլխավոր պահանջ հանդիսանում է դպրոցական գործունեության բոլոր ուղղությունների նկատմամբ ծնողական վերահսկողության ապահովումը:

Ծնողները ստացել են այնպիսի հարցերի քննարկման իրավունք, ուր նրանց մուտքն արգելված էր՝ ուսուցման առարկաների ընտրություն, դրանց ուսումնասիրության ծավալների որոշում, ուսումնական պլանների կազմում, ուսումնական քառորդների տևողության փոփոխություն, դպրոցի ուղղվածության ընտրություն, ներդպրոցական կանոնադրության մշակում, կարգուկանոնի, աշխատանքի, հանգստի, սննդի, բժշկական սպասարկման, աշակերտների խրախուսանքների և պատիժների համակարգի ապահովում: Մի խոսքով, լավ կազմակերպված համատեղ գործունեության արդյունքում դպրոցն ու ընտանիքը

երեխաների դաստիարակության գործում դառնում են լավ գործընկերներ, որտեղ յուրաքանչյուրն ունի որոշակի խնդիրներ և կատարում է աշխատանքի իր մասը:

Այստեղ գլխավոր ուղղություններից մեկը մնում է ***մանկավարժական պարտուսի*** (պարտադիր ուսուցման) կազմակերպումն ու իրականացումը: Դասախոսությունները, ծնողական համալսարանները, «կլոր սեղանները», կոնֆերանսները, ծնողական դպրոցները և մանկավարժական լուսավորության մշտական ընթացող և միանգամյա ձևերը օգնում են այն ծնողներին, որոնք ուզում են ավելի լավ հասկանալ իրենց երեխաներին, ճիշտ կազմակերպել նրանց հետ շփման պրոցեսը, օգնել դժվար հարցերի լուծման ժամանակ, հաղթահարել կոնֆլիկտային վիճակները: Շատ ծնողական կոմիտեներ միջոցներ են տրամադրում ծնողների համար մանկավարժական գրականության գնմանը, աջակցում են հայտնի մանկավարժական թերթերի և ամսագրերի տպագրմանն ու տարածմանը:

Ընդհանուր էթիկ, էսթետիկ, բարոյական, կամային, ինտելեկտուալ արժեքների ստեղծման աշխտանքը սկսվում է ***ծնողական դպրոցի*** ստեղծումից: Նրա ակտիվը, որպես համագործակցության առավել ունակ կառույց, զբաղվում է ծնողներին մարդասիրական մանկավարժության, համագործակցության մանկավարժության, գործնական մոտեցման հիմքերի ուսուցման անհրաժեշտության համոզմամբ: Արդյունք պետք է դառնա սեփական գիտելիքները լրացնելու, ընտանիքում երեխաների ճիշտ դաստիարակության պրակտիկ հիմունքները սովորելու ձգտման խթանումը:

Ծնողների ճնշող մեծամասնությունն ուզում էր տեսնել իր երեխային օժտված, կրթված, դաստիարակված, առաջադեմ: Հենց այս բնական ձգտման վրա էլ

կառուցվում են հարաբերությունները դպրոցի և ընտանիքի միջև: Կոորդինացնել նրանց ջանքերը նշանակում է վերացնել հակասությունները, ստեղծել միասեռ դաստիարակչական միջավայր, որն ուղղված է երեխաների մոտ բարոյական և ինտելեկտուալ աշխարհի էսթետիկ ընկալման զարգացմանը: Տարրական դպրոցի ուսուցիչները հոգ կտանեն այն մասին, որպեսզի ծնողները հասկանան և ընդունեն մարդասիրական մանկավարժության սկզբունքները՝[4]

- ✓ կրեատիվությունը՝ երեխաների ընդունակությունների ազատ զարգացումը;
- ✓ հումանիզմը՝ անհատի ճանաչումը որպես բացարձակ արժեք;
- ✓ ժողովրդավարությունը, որը հիմնված է երեխաների և մեծերի միջև հավասարաչափ հոգևոր հարաբերությունների հաստատմանը;
- ✓ քաղաքացիականությունը, որը հիմնված է պետական հասարակական համակարգում սեփական Ես-ի տեղի գիտակցման վրա;
- ✓ հետադարձությունը, որը թույլ է տալիս դաստիարակությունն իրականացնել ժողովրդական մանկավարժության ավանդույթների հիման վրա;
- ✓ համամարդկային բարոյական նորմերի և արժեքների առաջնայնությունը:

Ուսուցչի լուսավորչական գործունեության արդյունքում ծնողները ***գործնական իրավիճակների*** կազմակերպման միջոցով կմոտենան իրենց երեխաների դաստիարակությանը:

Ընտանիքի հետ իրական կապի ապահովման գլխավոր լարվածությունն ընկնում է ուսուցիչ-դասղեկի ուսերին: Դրա համար նա կիրառում է կապի տարաբնույթ ձևեր: Ավանդական է մնում լուսավորչական գործառույթը, քանի որ շատ ընտանիքներ ունեն մանկավարժական խորհուրդների և մասնագիտական աջակցության պահանջ: Իր առաջարկները նա ներառում է դպրոցական լեկտորիումների

---

[4] Ս.Վարդումյան,Ա.Հովհաննիսյան,Գ.Վարելլա<<Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ>>, Երևան 2003թ., էջ 89

աշխատանքի պլանների մեջ: Այստեղ նպատակահարմար է անցկացնել զրույց-դասախոսություններ ընտանեկան դաստիարակության խնդիրների, ձևերի և մեթոդների, տարբեր տարիքի երեխաների դաստիարակության նկատմամբ մոտեցումների, դաստիարակության առանձին՝ բարոյական, ֆիզիկական, աշխատանքային, ինտելեկտուալ, իրականության ինտելեկտուալ ուղղությունների, յուրացման նոր՝ տնտեսական, բնապահպանական, իրավական ոլորտների դաստիարակության; երեխաների առողջության ամրապնդման խնդիրների, առողջ կենսակերպի կազմակերպման, քաղաքացիականության և հայրենասիրության, գիտակցական կարգուկանոնի, պարտքի և պատասխանատվության դաստիարակման վերաբերյալ: Առանձին անհարաժեշտ է դիտարկել ընտանեկան դաստիարակության սուր հարցերը՝ երեխաների և ծնողների միջև օտարության զգացումի, կրիզիսային և կոնֆլիկտային իրրավիճակների հաղթահարումը, ընտանեկան դաստիարակության մեջ դժվարությունների և խոչընդոտների առաջացումը, պատասխանատվությունը հասարակության, երկրի և Աստծո առջև:

Ծնողական ժողովների ժամանակ կարևոր է ոչ միայն տեղեկացնել ծնողներին առաջադիմության և հաճախելիության արդյունքների, կարգուկանոնի խախտման փաստերի, ուսման մեջ չառաջադիմելու մասին, այլ այս ամենի հետ մեկտեղ պարզել դրանց պատճառները, հետաքրքրված լինելով քննարկել բացասական երևույթների հաղթահարման ճանապարհները, ընտրել կոնկրետ միջոցներ: Ծնողական ժողովների ժամանակ քննարկման մշտական թեմա պետք է լինի ընտանիքի և դպրոցի պահանջների միասնականության պահպանումը:

Անթույլատրելի է վերածել ծնողական ժողովը խրատների և հորդորների, աշակերտին և նրա ընտանիքին ենթարկել համընդհանուր խայտառակման,

ստանձնել դատավորի դերը, կայացնել չբողոքարկվող որոշումներ և վճիռներ: Հումանիստ ուսուցիչը իրավունք չունի նույնիսկ կատեգորիկ դատողության, քանի որ հասկանում է, թե ինչքան բարդ և հակասական են դպրոցականի այս կամ այն գործողության պատճառները: Նույնիսկ ամենակոշտ հստակության մեջ նա ցույց կտա իր աշակերտների նկատմամբ համբերատարության, մարդասիրության և կարեկցանքի օրինակ: Նրա կողմից ծնողներին տրվող խորհուրդները փափուկ են, կշռադատված, բարի:

Ուսուցիչ դասղեկի պրակտիկ գործունեության կարևոր մաս պետք է լինի աշակերտներին պարբերաբար տանը այցելելը, նրանց կյանքի և դաստիարակության պայմանների ուսումնասիրությունը հենց տեղում, միջոցների համաձայնեցումն ու կոորդինացումը: Պարզաբանվում են ոչ այնքան կենցաղային պայմանները, որքան ընտանեկան դաստիարակության կազմակերպումը: Փորձառու դասղեկին (մանկավարժին) շատ բան կարող է պատմել տան մթնոլորտը, հարաբերություններն ընտանիքի անդամների միջև: Չափազանց կարևոր է պահպանել հետևյալ կանոնները՝

- մի գնացեք այնտեղ որպես անկոչ հյուր, աշխատեք ցանկացած ճանապարհով հրավեր ստանալ ընտանիքի ցանկացած անդամի կողմից;
- ցուցաբերեք տակտ ծնողների հետ խոսակցության ժամանակ, միշտ սկսեք գովեստից և հաճոյախոսություններից;
- բացառեք աշակերտի նկատմամբ բողոքները, խոսեք խնդիրների մասին, հուշեք դրանց լուծման ճանապարհները;
- զրուցեք աշակերտի ներկայությամբ և միայն բացառիկ դեպքերում պահանջեք առանձին հանդիպում;
- ամեն կերպ ընդգծեք ձեր հետաքրքրվածությունը ձեր աշակերտի ճակատագրի վերաբերյալ;

- խորհուրդներն ու առաջարկները մի փաթաթեք, կշռադատեք ձեր պահանջների մակարդակն ու ընտանիքի հնարավորությունները;
- առաջ քաշեք համատեղ նախագծեր, պայմանավորվեք համատեղ կոնկրետ գործերի մասին;
- մի տվեք անվերջ խոստումներ, եղեք զուսպ բարդ իրավիճակներում, արտահայտեք զգուշավոր լավատեսություն:

Ցավոք, ծնողների հետ ոչ պրոֆեսիոնալ աշխատանքը հաճախ խաթարում է մանկավարժի և դպրոցի հեղինակությունը: Ծնողները կձգտեն համագործակցության և հետագա կոնտակտի, միայն տեսնելով դասղեկի շահագրգռվածությունն իրենց երեխաների ճակատագրով:

Մշտապես ակտուալ է մնում դպրոցի և ընտանիքի փոխգործակցության խնդիրը աշակերտների ցածր առաջադիմության հաղթահարման գործում: Սահմանվել է, որ դպրոցն ու ընտանիքը այս խնդրին նայում են տարբեր կերպ: Առաջինը գլխավոր պատճառներ է համարում ունակությունների անբավարարությունը և ընտանիքի կողմից վերահսկողության բացակայությունը: Երկրորդը՝ ոչ բավականաչափ ուշադրությունը, երեխաների անհանգիստ վիճակն ու դպրոցի թույլ աշխատանքը: Խնդրի համատեղ քննարկումը թույլ է տալիս պարզել աշակերտների վատ կամ թույլ առաջադիմության իրական պատճառները: Միայն հասկանալով դրանք, դպրոցն ու ընտանիքը կկարողանան շտկել իրանց գործունեությունը: Եթե այս հարցում փոխըմբռնման չեն հասնում, նրանցից յուրաքանչյուրը մնում է իր տեսակետին, և կյանքը դրանից միայն վատանում է:

Բնական է, բոլոր իրավիճակները, որոնց հետ կբախվի ուսուցիչը, կանխատեսելն անհնար է: Սակայն մանկավարժական պատրաստվածության էությունն էլ հենց կայանում է նրանում, որ պետք է զինել մասնագետին առաջացող իրավիճակների

վերլուծության, դրանցից դուրս գալու օպտիմալ տարբերակների որոնման մեթոդներով: Մանկավարժի խորհուրդները կլինեն այնքան հիմնավորված, ինչքան որ որակյալ է նա ախտորոշել կոնկրետ իրավիճակը:

Եվ այսպես, ընտանիքի ազդեցությունը երեխայի վրա շատ ավելի ուժեղ է, քան մնացած բոլոր դաստիարակչական ազդեցությունները, այստեղ ձևավորվում են այն որակները, որոնք կարող են ձևավորվել միայն ընտանիքում: Այդ պատճառով էլ հաջողության հասնելու ձգտող մանկավարժը ակտիվ կերպով, չխանայելով ոչ ժամանակ, ոչ էլ ջանքեր, կհամագործակցի ընտանիքի հետ, որպեսզի ծնողներին դարձնի իր համախոհները և օգնականները, իսկ վերջիններս էլ իրենց հերթին կօգնեն դպրոցին:

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՓՈԽԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ծնողներն ու ընտանիքի անդամները երեխայի առաջին և ամենակարևոր ուսուցիչներն են: Ոչ մի հակասություն չի կարող լինել դպրոցի և ընտանիքի միջև, եթե ծնողներն ու դպրոցը հաջողությամբ համագործակցում են, ինչը աշակերտի կրթության վճռորոշ տարրն է: Շատ է քննարկվում ծնողներին ներգրավելու ձևի հարցը: Որոշ մարդկանց կարծիքով ծնողների դերը սահմանափակվում է երեխաների կարգապահությանը հետևելով և ուսուցիչներին աջակցելով: Մյուսներն այդ դերն ավելի ընդլայնված են ընկալում: Ըստ նրանց՝ ծնողներն պետք է կարդան երեխաների համար օգնել տնային աշխատանքները կատարելիս, մասնակցեն ծնող-ուսուցիչ կոնֆերանսներին, համադպրոցական ծնողական ժողովներին: Ծնողներն իրենք էլ են ցանկանում ընդգրկվել իրենց երեխաների կրթության գործում: Միայն թե շատերը չգիտեն, թե ինչպես: Կրթության գործում ծնողների ներգրավելու հնարավորություններ ստեղծելիս պետք է հարցնել նաև ծնողի կարծիքը:

Դրական և արդյունավետ դպրոցական միջավայր ստեղծելու գործում, աջակցության մեկ այլ աղբյուր է դպրոցական կյանքում ծնողների ներգրավումը: Ծնողական համայնքի շատ ներկայացուցիչներ, ոստիկաններ կամ հրշեջներ քաղաքի կամ երկրի մաշտաբով վարչական պաշտոնյաներ, հաճախ ցանկանում են դպրոց այցելել, բացատրություններ տալ երևույթներին, ներկայացնել իրենց զաղափարներն ու գործունեությունը, պատասխանել հարցերին, խորհուրդներ տալ աշակերտներին ու լսել նրանց մտքերն ու առաջարկներն: Արդյունքում պարզ է դառնում, որ դպրոցական գործունեության մեջ ծնողների ներգրավումը նպաստում է դրական մթնոլորտի ստեծմանը: Այսօր դպրոցում ծնողի ներգրավման ընդլայնումը կարող է որակյալ տարրական կրթությանը նպաստելու բեռն ու հաճույքը կիսելու հնարավորություն ստեղծել:

Ծնողները իրենց երեխաների դաստիարակության և կրթելու գործում դառնում են ուսուցչի գործնկերները: Նրանք իրենց երեխաների համար ունեն նույն նպատակները, ինչ որ ուսուցիչները՝ բոլոր երեխաների համար: Ծնողներն ու դպրոցը միասին են պատասխանտու զարգացման բոլոր ոլորտներում: Կրթության հարցում

ծնողների ակտիվ մասնակցությունը ապահովելու համար կարելի է թույլ տալ, որ ծնողները դասավանդեն՝ օգտագործելով իրենց մասնագիտական գիտելիքները: Իրենց ծնողներին տեսնելով դպրոցի կյանքում ներգրավված և համագործակցելիս՝ երեխաներն իրենց ավելի կարևոր մարդ են զգում: Ընտանքի և դպրոցի լավ, բարեկամական հարաբերություններից շահում են բոլոր երեխաները:[5]

Հատկապես տարրական դպրոցում երեխաների ուսումանռության գործում ծնողների ներգրավումը խիստ էական նշանակություն ունի, որքան շատ, այնքան լավ:

[5]Ս.Խրիմյան,Ա.Հովսեփյան,Մ.Մելքոնյան,Ն.Էլոյան,Ֆ.Շահրոֆի<<Դպրոցի ղեկավարում և կառավարում>>,Երևան 2004թ., էջ 137

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

Սոցիալական հետազոտությունների տվյալներով աշխատող կինը օրվա ընթացքում երեխայի դաստիարակությանը տրամադրում է 16 րոպե, հանգստյան օրերին՝ 30 րոպե: Երեխաների հետ ծնողների շփումը, նրանց համատեղ զբաղմունքները, ցավոք, բազմաթիվ ընտանիքների համար մնում են անթույլատրելի շռայլություն և հիմնականում հավասարեցվում են դպրոցում երեխայի ուսման վերահսկողությանը, իսկ վերահսկողությունն էլ իր հերթին նրան, թե ինչ գնահատականներ է ստացել երեխան: Երեխայի համար ընտանիքում դառնում է ավելի անհարմար: Ռուսաստանի մի շարք քաղաքների դպրոցականների հարցման արդյունքների համաձայն ծնողների 60%-ը ֆիզիկապես պատժում են իրենց երեխաներին, 86% դեպքերում կիրառվում է ծեծը, 9% դեպքերում՝ անկյունում ծնկի իջեցնելը, 5 % դեպքերում՝ հարվածները դեմքին և գլխին:

Տարրական դպրոցին է պատկանում կրտսեր դպրոցական տարիքի երեխաների ընտանեկան դաստիարակության կազմակերպումը միկրոշրջանում: Դաստիարակչական ազդեցության հաջող կոորդինացման համար այն պետք է կանգնի մանկավարժական լուսավորության մարդասիրական դիրքերի վրա:

Հետազոտումների համաձայն, աշակերտները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում, ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ակադեմիական ձեռքբերում և ավելի որակով կատարած տնային առաջադրանքներ, նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է և աչքի են ընկնում դրական վարքով, բարեհամբույր են դպրոցի նկատմամբ և ունեն սեփական աձի և

հնարավորությունների նկատմամբ հավատ: Ծնողների ներգրավվածությունը դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը հարստացնում է դպրոցի կուլտուրան և նպաստում է նրա զարգացմանը: Այսպիսով, ավելի լավ արդյունքների հասնելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ: Ծնողների ակտիվ ներգրավումը դրական է անդրադառնում և դպրոցական հասարակության, ծնողների և աշակերտության վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի արդյունքում հանգեցինք այն եզրահանգման, որ

1. Դրական և արդյունավետ դպրոցական միջավայր ստեղծելու գործում, աջակցության մեկ այլ աղբյուր է դպրոցական կյանքում ծնողների ներգրավումը:
2. Ծնողական համայնքի շատ ներկայացուցիչներ, ոստիկաններ կամ հրշեջներ քաղաքի կամ երկրի մաշտաբով վարչական պաշտոնյաներ, հաճախ ցանկանում են դպրոց այցելել, բացատրություններ տալ երևույթներին, ներկայացնել իրենց գաղափարներն ու գործունեությունը, պատասխանել հարցերին, խորհուրդներ տալ աշակերտներին ու լսել նրանց մտքերն ու առաջարկներն: Արդյունքում պարզ է դառնում, որ դպրոցական գործունեության մեջ ծնողների ներգրավումը նպաստում է դրական մթնոլորտի ստեծմանը:
3. Այսօր դպրոցում ծնողի ներգրավման ընդլայնումը կարող է որակյալ տարրական կրթությանը նպաստելու բեռն ու հաճույքը կիսելու հնարավորություն ստեղծել:
4. Ծնողները իրենց երեխաների դաստիարակության և կրթելու գործում դառնում են ուսուցչի գործնկերները: Նրանք իրենց երեխաների համար ունեն նույն նպատակները, ինչ որ ուսուցիչները՝ բոլոր երեխաների համար:
5. Ծնողներն ու դպրոցը միասին են պատասխանտու զարգացման բոլոր ոլորտներում: Կրթության հարցում ծնողների ակտիվ մասնակցությունը ապահովելու համար կարելի է թույլ տալ, որ ծնողները դասավանդեն՝ օգտագործելով իրենց մասնագիտական գիտելիքները:
6. Իրենց ծնողներին տեսնելով դպրոցի կյանքում ներգրավված և համագործակցելիս՝ երեխաներն իրենց ավելի կարևոր մարդ են զգում:
7. Ընտանքի և դպրոցի լավ, բարեկամական հարաբերություններից շահում են բոլոր երեխաները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Լ.Ասատրյան, Ա.Կարապետյան,Մ,Ասատրյան, Թ.Ցոլակյան <<Կրթության համակարգի կառավարման հիմունքներ>>, Երևան 2003 թ.
2. Հ. Մ. Մախչանյան , Ալ. Ս. Մանուկյան , Մանկավարժության ընդհանուր հիմունքներ , Երևան , 1997թ. , Երևանի համալսարանի հրատարակչություն
3. Յու. Ա. Ամիրջանյան , Ա. Ս. Սահակյան , Մանկավարժություն, Երևան , 2005թ.
4. Ս.Վարդումյան,Ա.Հովհաննիսյան,Գ.Վարելլա<<Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ>>, Երևան 2003թ.
5. Ս.Վարդումյան,Ա.Հովհաննիսյան,Գ.Վարելլա<<Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ>>, Երևան 2005թ.
6. Ս.Խրիմյան,Ա.Հովսեփյան,Մ.Մելքոնյան,Ն.Էլոյան,Ֆ.Շահրոֆի<<Դպրոցի ղեկավարում և կառավարում>>,Երևան 2004թ.